Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20.01.2015թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 14.01.2015թ.-ի թիվ 2 կարգադրությունը, <<Գետափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում անցկացվեց 2013-2014թ.թ.-ների գործունեության ֆինանսական ներքին աուդիտ, ներքին աուդիտի բաժնի բաժնի գլ.մասնագետներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին դպրոցի տնօրեն՝ Թ.Քոչարյանը և հաշվապահ՝ Ս. Վարդանյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում:

բ/ Ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում:

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում:

դ/ Ակտիվների գույքագրման, առկայության համապատասխանության ստուգում:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Ն.Կարապետյանը և Հ.Ավետիսյանը: **ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ:**

<<Գետաափի միջնակարգ դպրոց>> Պետական ոչ Առևտրային կազմակերպություն՝ գ. Գետափ:

Գործունեության նպատակը՝ աշակերտների հանրակրթական ուսուցում:

2013թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 12:

-աշակերտների թիվը- 203:

-աշակերտների միջին խտությունը- 16.9:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 80, միջին խտությունը 20:
Միջին դպրոց 5 դասարան, աշակերտների թիվը 67, միջին խտությունը 13.4:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 56, միջին խտությունը 18.7:
Աշխատողների թվաքանակը 46, մանկավարժական աշխատողների թվաքանակը 24, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 14.2, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 22, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 21.3: Ընդամենը դրույքների թիվը 35.5:
ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 13.0 ժամ կամ 0.59 դրույք:

2014թ.-ի սեպտեմբերի 1-ի դրությամբ՝ ըստ տարիֆիկացիայի՝

-դասարանների թիվը- 12:

-աշակերտների թիվը- 202:

-աշակերտների միջին խտությունը- 16.8:

Տարրական դպրոց 4 դասարան, աշակերտների թիվը 76, միջին խտությունը 19:
Միջին դպրոց 5 դասարան, աշակերտների թիվը 71, միջին խտությունը 14.2:
Ավագ դպրոց 3 դասարան, աշակերտների թիվը 55, միջին խտությունը 18.3:
Աշխատողների թվաքանակը՝ 43, մանկավարժական աշխատողների թվաքանակը՝ 25, մանկավարժական աշխատողների դրույքների թիվը 15.1, վարչական և սպասարկող անձնակազմի թվաքանակը 18, վարչական և սպասարկող անձնակազմի դրույքների թիվը 14.0: Ընդամենը դրույքների թիվը 29.1:
Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 13.3 ժամ կամ 0.60 դրույք:

2. Ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում

2013թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամենը	8 ամիս	4 ամիս	Ընդամենը	8 ամիս	4 ամիս	Ընդամենը	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	76	80	X	75	67	X	51	56	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	76	80	X	75	67	X	51	56	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	76	80	X	75	67	X	51	56	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	111235	111235		111235	111235		111235	111235		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	4560.1	2280.0	6840.1	5927.1	2963.6	8890.7	4519.8	2259.9	6779.8	22510.6
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		16876
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		4536.5
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		43923.1
Ըստ աուդիտի 3*4	4560.1	2280.0	6840.1	5927.1	2963.6	8890.7	4519.8	2259.9	6779.8	22510.6
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16876
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		4536.5
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		43923.1
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 77, 72 և 53 աշակերտ:

2014թ.

հազ.դրամ

Ցուցանիշներ	Տարրական դպրոց			Միջին դպրոց			Ավագ դպրոց			Ընդամենը
	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	8 ամիս	4 ամիս	Ընդամեն	
1.Աշակերտների թիվը ըստ կոմպլեկտավորման	78	75	X	68	71	X	54	55	X	
2.Աշակերտների թիվը ըստ տարիֆիկացիայի	78	76	X	68	71	X	54	55	X	
3.Աշակերտների թիվը ըստ մատյանների	78	76	X	68	71	X	54	55	X	
4. Մեկ աշակերտի թվով ֆինանսավորման չափը/դրամ/	121097	121097		121097	121097		121097	121097		
5.Ֆինանսավորում փաստացի 1*4/հազ.դրամ/	4983.1	2491.5	7474.6	6206.8	3103.4	9310.2	5032.2	2516.1	7548.4	24333.2
6.Պահպանման ծախսեր/հազ.դրամ/	X	X		X	X		X	X		16029.7
7.Այլ լրացուցիչ ֆինանսավորում	X	X		X	X		X	X		4900.4
8.Այլ լրացուցիչ պակասեցում	X	X		X	X		X	X		
9.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		45263.3
Ըստ աուդիտի 3*4	4983.1	2491.5	7474.6	6206.8	3103.4	9310.2	5032.2	2516.1	7548.4	24333.2
6.Պահպանման ծախսեր	X	X		X	X		X	X		16029.7
Այլ լրացուցիչ ավելացում	X	X		X	X		X	X		4900.4
8.Ընդամենը ֆինանսավորում	X	X		X	X		X	X		45263.3
Շեղում/ավելի ֆինանս.+,պակաս ֆինանս -/	X	X		X	X		X	X		0.0

Ըստ կոմպլեկտավորման և ըստ աուդիտի տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտների միջին թիվը կազմել է համապատասխանաբար՝ 77, 69 և 54 աշակերտ:

Կազմակերպությունում ռիսկի գնահատումը և ներքին վերահսկողությունը

Ըստ ձեռք բերած տվյալների ռիսկը և ներքին վերահսկողությունը գնահատելու համար հիմք ենք ընդունել □ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ□ ստանդարտը: Հաշիվների մնացորդների և գործառնությունների դասերի կտրվածքով ապրանքա-նյութական արժեքների հնարավոր կորստի ու յուրացման վրա: Ներքին վերահսկողությանը բնորոշ սահմանափակումների կտրվածքով՝ ներքին վերահսկողության համակարգում խաբեության առկայության հնարավորությունը կազմակերպության ղեկավարության անդամների կամ աշխատողների կազմակերպության ներսում կամ այլ կողմերի միջև գաղտնի համաձայնության գալու հնարավոր լինելու վրա:

Հաշվապահական հաշվառման համակարգի վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու, ճանաչելու համար ուշադրություն է դարձվել հաշվապահական հաշվառման գրանցումների, ֆինանսական հաշվետվությունների, հաշիվների և օժանդակող փաստաթղթերի արժանահավատությանը: Վերահսկողության ռիսկի նախնական գնահատումը թույլ է տալիս եզրահանգելու, որ կազմակերպության հաշվապահական հաշվառումը բավարար է գործել, ներքին վերահսկողության համակարգը՝ նույնպես բավարար:

ՀՀ պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2013թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	44553.6	44553.6	44535.7	44535.5	46262.9	46264.9	1711.3
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	44553.6	43923.1	44535.7	44535.5	46262.9	46264.9	1711.3
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	42177.1		43331.5	43331.5	43493.3	43493.5	1316.4
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	2376.5		1204.2	1204	2769.6	2771.4	394.9
Գրասենյակային նյութեր և հագուստ	300		150	150	150	150	-150
Կենցաղ և հանրային սննդի նյութեր			203	203	203	203	203
Հատուկ(տեղեկատվ. ծառ.) նպատ.նյութեր	100		72	72	72	72	-28
Այլ ծախսեր				133.9		133.9	133.9
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր							0
Ներքին գործուղումներ	80		51	51	57.6	57.6	-22.4
Կապի ծառայության վճարներ	82		79.5	79.5	81.3	83.1	1.1
Կոմունալ ծառայությունների վճար	1714.5		648.7	514.6	2205.7	2071.8	357.3
էլ. էներգիայի ծախսեր	1314.5		105.4	231.3	180.7	306.3	-1008.2
Վառելիքի և ջեռուցում ծախսեր	290		433.1	173.1	1912.3	1652.3	1362.3
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	110		110.2	110.2	112.7	113.2	3.2
Նպաստ							0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	100						-100
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.		315.1					0
Այլ ծրագրեր*		315.4					0
Այլ ծրագրեր**							

* Գազի ու էլեկտրական էներգիայի լրացուցիչ ծախսերի կատարման համար ֆինանսավորումն է:

<< պետական բյուջեի պարտքերի վերաբերյալ հաշվետվություն 2014թ.

հազ.դրամ

Անվանումը	Նախատես-ված	Ֆինանս.	Դրամարկ. ծախս ըստ հաշվետ.	Դրամարկ. ծախս ըստ աուդիտի	Փաստ. ծախս ըստ հաշվետվ.	Փաստ. ծախս ըստ աուդիտի	Շեղում
Ընդամենը ֆինանսավորում	47523.7	47523.7	47281.4	47281.4	46045.4	45842.6	-1681.1
Ընդամենը ընթացիկ տարվա նախահաշվով նախատեսված	47505.6	45263.3	47281.4	47281.4	46045.4	45842.6	-1663
Աշխատավ. և աշխատ. հավասար. այլ վճարներ	42130.3		41908.3	41908.3	41714.3	41724.8	-405.5
Պարտադիր սոց. ապահով. վճարներ							0
Ապրանքների գնման և ծառայ. վճարման ծախս. որից	5375.3		5373.1	5373.1	4331.1	4117.8	-1257.5
Գրասենյակային նյութեր և հագուստ	150		61.7	61.7	61.7	61.7	-88.3
Կենցաղ և հանրային սննդի նյութեր	960.4		934.9	934.9	934.9	934.9	-25.5
Հատուկ(տեղեկատվ.ծառ.) նպատ.նյութեր	50		59	59	59	59	9
Այլ ծախսեր	273.1		53.9	204.8	115.3	204.8	-68.3
Գործառնական և բանկ.ծառ.ծախսեր							0
Ներքին գործուղումներ	80		69.6	69.6	63	63	-17
Կապի ծառայության վճարներ	100		65.5	65.5	64.3	63.2	-36.8
Կոմունալ ծառայությունների վճար	3511.8		3978.5	3827.6	2882.9	2581.2	-930.6
էլ. էներգիայի ծախսեր	3211.8		566.2	566.2	505.3	505	-2706.8
Վառելիքի և ջեռուցում ծախսեր			3101.3	2950.4	2069.1	1767.3	1767.3
Ջրմուղ կոյուղուց օգտ. վարձի վճար.	100		111	111	108.5	108.9	8.9
Այլ ծախսեր	200		200	200	200	200	0
Ընդհանուր բնույթի այլ ծառայ.	250		150	150	150	150	-100
Բանկի տոկոս							0
Տարեսկզբի դրամ.միջոցների ազատ մնաց.	18.1	18.1					0
Այլ ծրագրեր		1341.5					0
Այլ ծրագրեր*		827.5					
Այլ ծրագրեր**		73.3					

* Դպրոցական սննդի կազմակերպման և ապահովման նպատակով նախահաշվով նախատեսվել է 870.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 827.5 հազ.դրամ, փաստացի ծախսվել է 827.5 հազ.դրամ:

** Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում ծրագրով ֆինանսավորում:

Դեբիտորների և Կրեդիտորների հաշվառման աղյուսակ

	Աշխատավարձ և դրան հավ. այլ վճար.		Սոց ապահ. վճարներ		Կապի ծառայութ.		էլ էներգ. ծախսեր.		Գազ		Այլ Դեբիտ. և Կրեդիտ պարտքեր		Ընդամենը	
	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K	D	K
Մն.01.01.13թ.	7.0				1.8			0.3	23.6		0.2		32.6	0.3
Շրջանառություն 2013թ.	43331.5	43493.5			79.5	83.1	231.3	306.3	173.1	1652.3	720.1	729.7	44535.5	46264.9
Մն.01.01.14թ.		155.0				1.8		75.3		1455.6		9.4	0.0	1697.1
Շրջանառություն 2014թ.	41908.3	41724.8			65.5	63.2	566.2	505.0	2950.4	1767.3	1791.0	1782.3	47281.4	45842.6
Մն.01.01.15թ.	28.5				0.5			14.1		272.5		0.7	29.0	287.3

Առ 01.01.15թ. դրությամբ կազմակերպության դեբիտորական պարտքը կազմում է 29.0 հազ.դրամ, որից՝ պարտադիր սոցիալական վճար – 28.5 հազ.դրամ, կապի ծառայություն – 0.5 հազ.դրամ: Կրեդիտորական պարտքերը կազմում են 287.3 հազ.դրամ, որից՝ էլ.էներգիա - 14.1 հազ.դրամ, գազի ծառայություն - 272.5 հազ.դրամ և ջրի վարձ - 0.7 հազ.դրամ:

Հաշվապահական հաշվեկշիռ ՁԵՎ N 1

առ. 01.01.2014թ. - առ 01.01.2015թ.

հազ.դրամ

Ակտիվ	Տարեվերջի դրությամբ ըստ հաշվետվության	Տարեվերջի դրությամբ ըստ աուդիտի	Շեղում
Ոչ ընթացիկ ակտիվներ որից	14971.1	14983	11.9
հիմնական միջոցներ			0
մն.արժ.	14971.1	14983	11.9
արժեքը	14971.1	14983	11.9
մաշվածություն			0
Ընթացիկ ակտիվներ որից	2762.5	2751.3	-11.2
Նյութեր			0
փոքրարժեք և արագամաշ առարկաներ	2480	2480	0
մն.արժ.	0	0	0
արժեքը			0
մաշվածություն			0
կարճաժամ. դեբիտ.պարտքեր	40.2	29	-11.2
որից հաշ. տրված կանխ.վճ.գծ.			0
հաշվ. գնորդ. և պատ. հետ			0
Հաշվ.սոց.ապահ. և ապահովության գծով			0
Հաշվարկներ անձնակազմի հետ			0
Հաշվարկներ անձնակազմի նետ նյութական վնասի հատուցման գծով			0
հաշվարկներ բյուջեի հետ	40.2	28.5	-11.7
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
հաշվ տարբ. դեբիտ. հետ		0.5	0.5
դրամական միջոցներ,որից	242.3	242.3	0
դրամարկղ			0
հաշվարկային հաշիվ	242.3	242.3	0
Հաշվեկշիռ	17733.6	17734.3	0.7
Պասիվ			0
Սեփական կապիտալ որից՝	17447	17447	0
Լրացուցիչ կապիտալ	17447	17447	0
Հաշվետու տար.չօգ. զուտ շահ.			0
Նախ. կար. չօգ. զուտ շահ.			0
Եկամ. վերաբ. շնորհ.			0
Կարճ. ժամկ. կրեդ. պարտքեր	286.6	287.3	0.7
այդ թվում			0
հաշվարկ. մատակ.և կապալ. հետ	286.6	287.3	0.7
հաշվարկներ բյուջեի հետ			0
Հաշվ. սոց ապահ. և ապահով. գծ.			0
այդ թվում տույժեր և տուգանքներ			0
Հաշվարկներ անձնակազմի հետ եկամուտների վճարման գծով			0
Հաշվարկներ տարբ. կրեդիտորների հետ			0
հաշվարկներ հաշվետու անձանց հետ			0
Կարճ. ժամկ. այլ պասիվներ որից	0	0	0
գալիք ժաման. եկամուտներ			0
Հաշվեկշիռ	17733.6	17734.3	0.7

Մեր կողմից աուդիտի արդյունքներով կազմվել է հաշվեկշիռ, որը հիմք է տալիս եզրակացնելու՝ հաշվեկշիռը տալիս է կազմակերպության հաշվեկշռի ճշմարիտ և իրական պատկերը:

Դրամական միջոցների հոսքերի մասին
հաշվետվություն Ձև N 4
առ. 01.01.2014թ. - առ 01.01.2015թ.

հազ.դրամ

Ցուցանիշների անվանումը	Տող	Գումարն ըստ հաշ.	Գումարն ըստ աուդիտի տվյալների	Շեղում
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	010	18.1	18.1	0.0
գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր				
Արտադրանքի աշխատանքների, ծառայությունների իրացումից	020	45263.3	45263.3	0.0
Ապրանքների իրացումից	030			0.0
Ընթացիկ այլ ակտիվների իրացումից	040			0.0
Ստացված կանխավճարներից	050			0.0
Կարճաժամկետ ֆինանսական ներդրումների դիմաց հաշվարկված եկամուտներից	060			0.0
Գործառնական այլ գործունեությունից	070	2303.7	2242.3	-61.4
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	080	47567.0	47505.6	-61.4
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր				
Ձեռք բերված արտադրական պաշարների դիմաց	090			0.0
Ապրանքների ձեռք բերման դիմաց	100			0.0
Կատարված աշխատանքների մատուցված ծառայությունների դիմաց	110	5434.5	5373.1	-61.4
Տրված կանխավճարներ	120			0.0
Աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դիմաց	130	41908.3	41908.3	0.0
Սոցիալական ապահովագրության և ապահովության նպատակով	140			0.0
Առհաշիվ տրված գումարներ	150			0.0
Վճարումներ բյուջե	160			0.0
Գործառնական այլ գործունեության նպատակով	170			0.0
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	180	47342.8	47281.4	-61.4
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	190	224.2	224.2	0.0
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ		242.3	242.3	0.0

Մեր կողմից դրամական հոսքերի աուդիտ է իրականացվել, որը հիմք է հանդիսանում կազմակերպության կողմից ստացված եկամուտների և կատարված դրամական ծախսերի վերաբերյալ ճշմարիտ կարծիք կազմելու համար:

Վայոց Ձորի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից իրականացրեցինք <<Գետափի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության 2012-2013թ.թ.-ի բյուջետային տարվա ֆինանսական աուդիտ առ 01.01.2015թ. դրությամբ: Հաշվապահական հաշվեկշռի և ֆինանսական

հաշվետվությունների կազմման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վերաբերյալ: Աուդիտն անցկացրեցինք աուդիտի ~~ազգային~~ ստանդարտներին և գործնական փորձին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և իրականացնել, որպեսզի ունենանք ողջամիտ հավաստում, որ ֆինանսական հաշվետվությունները և հաշվապահական հաշվառման փաստաթղթավորումը և ձևակերպումները արժանահավատ են, էական խեղաթյուրումներից զերծ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքները:

Մեր կողմից կատարվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման ուսումնասիրություն, ֆինանսական և գործառական տեղեկատվության ստուգում, տնտեսական գործունեության նվազագույն ծախսերով իրականացման ուսումնասիրություն, ինչպես նաև օրենքների այլ իրավական ակտերի, կազմակերպության ղեկավարության քաղաքականության, հրահանգների և ներքին այլ պահանջների ուսումնասիրություն: Իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված ձևով ֆինանսական հաշվետվությունների հիմունքների պահանջներին համապատասխան: Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների տվյալների արժանահավատությունը գնահատվել է աուդիտի արդյունքներով, որն արտահայտվել է աուդիտի հաշվետվության մեջ:

Ընտրանքային կարգով համադրեցինք գույքացուցակներով արտացոլված և առկա գույքը: Անհամապատասխանություններ չհայտնաբերեցինք:

2013-2014թ.թ. ուսումնական տարում ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 13.0 ժամ կամ 0.59 դրույք: 2014-2015թ.թ.-ին՝ 13.3 ժամ կամ 0.60 դրույք: ՈՒսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը 2014-2015թ.թ.-ին 2013-2014թ.թ. նկատմամբ աճման տենդենց է կրում:

Արձանագրված թերություններ և խախտումներ:

2013-2014թթ.-ների ուսումնական տարվա/01.09.2013թ./տարիֆիկացիոն ցուցակը հաստատված չէ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության կողմից և վավերացված չէ մարզպետարանի աշխատակազմի կնիքով: 2013թ. նախահաշվով նախատեսվել է 42177.1 հազ.դրամ աշխատավարձ և նրան հավասարեցված վճարներ, փաստացի հաշվարկվել է 43495.5 հազ.դրամ: Նախահաշվից 1316.4 հազ.դրամի չափով ավելի աշխատավարձ է հաշվարկվել: 01.01.2014թ.-ի դրությամբ աշխատավարձի պարտքը կազմել է 155.0 հազ.դրամ:

Կազմակերպության առ 01.01.2015թ.-ի դրությամբ դեբիտորական պարտքը կազմում է 29.0 հազ.դրամ, կրեդիտորական պարտքը՝ 287.3 հազ.դրամ, դրամական մնացորդը՝ 242.3 հազ.դրամ: ՀՀ կառավարության որոշմամբ 2014թ.-ին հատկացվել է 1221.9 հազ.դրամ, 2013թ.-ի նվազագույն աշխատավարձի բարձրացման փոխհատուցման համար: Դրամական մնացորդով ապահովված չէ 16.0 հազ.դրամի կրեդիտորական պարտքը:

2014թ.-ի դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվետվության մեջ ճիշտ չեն արտացոլված բյուջետային տարվա սկզբի և վերջի դրությամբ, որը ճշտվել է աուդիտի արդյունքում:

Համաձայն <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի նշված թերությունները վերացնելու համար տրվեց համապատասխան խորհրդատվություն:

Առաջարկվեց դպրոցի տնօրենին՝

ա/ Ապահովել հաստատված և վավերացված տարիֆիկացիոն ցուցակների առկայություն:

բ/ Ապահովել կրեդիտորական պարտքերի դրամական միջոցներով ապահովվածություն:

գ/ Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվետվությունը կազմել ճիշտ և արժանահավատ:

գ/ Ներկայացնել համապատասխան հիմնավորումներ նախահաշվով նախատեսված աշխատավարձի նկատմամբ ավելի հաշվարկված աշխատավարձի վերաբերյալ:

Առաջարկությունների կատարման վերաբերյալ մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան
Ներքին աուդիտորներ՝ Ն. Կարապետյան
Ավետիսյան
Դպրոցի տնօրեն՝ Թ. Քոչարյան
Հաշվապահ՝ Ս. Վարդանյան